ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀՈՂԻՆ ԱՄՐԱՑՄԱՆ ԵՎ ՃՈՐՏԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պրոֆ. Ա. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ շինականության սոցիալ-տնտեսական դոյավիճակի, նրա ազատ երկրի իրավունքի սահմանափակման, հողին ամրացման ու ճորտացման, գյուղացիության և հողատեր-ֆեոդալների միջև ստեղծված իրավա-տնտեսական հարաբերությունների և սրանց հետ անմիջականորեն առնչված այլ հարցերի ուսումնասիրությունը պատմական հարուստ անցյալ ունի։ Այս պրոբլեմները բազմիցս հետազոտվել, ուսումնասիրվել և տարբերակումների տեղիք են տվել։ Անցյալի և մեր օրերի պատմաբան-բանասերները, պատմական և իրավաբանական մտքի ներկայացուցիչները արտահայտել են երկու իրարամերժ կարծիքներ։ Հետազոտողների մի մասը ջանացել է բացատրել ոչ միայն «ճորտատիրության», «ճորտատիրական իրավունքի», այլև ճորտացված և հողին ամրացված գյուղացիության առկայությունը և՛ հին, և՛ միջնադարյան Հայաստանում։ Ավելին, նրանց կարծիքով «ստրուկներ», «ծառա-ադախիններ», «ճորտեր» են դարձել ոչ թե «ի բնե ազատ» հայերը, այլ ռազմագերի-գերիները միայն։ Հետազոտողների մի այլ մասը, ընդհակառակը, ձգտել է ապացուցել, որ ոչ միայն միջնադարյան, այլև հին Հայաստանում «հայ շինականները համարվել են կալվածատեր-ազնվականների հատուկ գույքը», «կապված են եղել և՛ հողին և՛ իրենց տերերին» կամ «շինականների ճորտացման պրոցեսը սկսվելով ֆեոդալիզմի հենց սկզբից ավարտվել է միջնադարյան Հայաստանում»։

Հայ իրավաբանական գրականության ականավոր ներկայացուցիչ Վահան Բաստամյանցը Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» իր կատարած հրատարակության ծանոթագրություններից մեկում գրել է. «Ճայռանի է, որ Հայաստանում երբեմն չկային նոտեր ո՛չ բնիկներից և ո՛չ էլ պատերազմում գերի բռնվածներից այն դրությամբ, որպիսի դրությամբ կային նոտեր հելլենության ժամանակ գրեթե բոլոր երկրներում, իսկ Բիսանդիության ժամանակ շատ երկրներում»[1]։ Հետևակի կարծիքով, թեև հայ գյուղացիները երբեք ճորտեր չեն եղել, բայց նստելով նախարարներին և իշխաններին պատկանած «հողերի վերա պարտավոր էին զանազան ծառայություններ մատուցանել նոցա և տարկեր տալ, զս. երկրի բերքերից տալ վեցից մեկը, կամ և բեկար հանել և այլն»[2]։

1 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց» իրավաբանական հետազոտություններ հանդերձ ծանոթություններով Վահան Ա. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 316, ծանոթ. 682 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են.—Ա. Հ.)։

2 Նույն տեղում։

Ակնհայտ է, որ Վահան Բաստամյանցը ընդունում է հայ շինականության հարկապարտությունը միայն և ոչ ավելին։ Հայ հին շինականության իրավա-տնտեսական դրության հետ կապված մի շարք հարցեր շոշափել է իրավագիտության մի այլ ներկայացուցիչ՝ Սարգիս Բահաթրյանը։ Հեղինակը, պատմական կուզահեռ անցկացնելով Հայաստանի և հարևան երկրների հողային ու անձնական հարաբերությունների, հասարակական տարբեր խավերի և դասերի իրավական գոյավիճակի միջև, ջանացել է ապացուցել, որ իբր և՛ Հայկապյան և՛ Արշակունյաց Հայաստանում «...սովորական երևույթ է դառնում մարդու վրա սեփականության իրավունքը... Մարդու կյանքը, նրա ընտանիքը, կայքը և այլն կարող էին պատկանել մյուսին»։ Սակայն մարդու, նրա կյանքի և կայքի վրա տարածվող «սեփականության իրավունքը», հեղինակի կարծիքով, տարածվում էր «ռազմագերի-ստրուկների վրա» միայն[3]։

Հայ շինականության իրավա-տնտեսական դրության հետազոտության մարդում մեծ է վրացագետ և հայագետ Իվ. Ջավախովի (Իվ. Ջավախիշվիլու) ծառայությունը։ Անվանի գիտնականը սառաջին հետազոտողն էր, որ լուրջ փորձեր կատարեց ստուգաբանելու մեր սկզբնաղբյուրներում այնքան հաճախակի գործածված «տեր», «տանուտեր», «նախարար», «ազատ», «ռամիկ», «շինական» տերմինների ոչ միայն լեզվական, այլև սոցիալական իմաստն ու նշանակությունը։ Ստուգաբանելով այս տերմինները, նա աշխատեց ապացուցել, որ իբր «հայ ռամիկները պատկանելիս են եղել ազատների, իսկ շինականները՝ անազատների դասին»[4]։ Ավելին, հեղինակը մի շարք առիթներով հիշատակել է, որ հայ շինականները սատրազասված են եղել ազնվականներին և հանդիսացել են երկրի հարկատու դասը, բայց իրենց իրավական դրությամբ եղել են «անազատ, կապված հողին և իրենց տերերին»[5]։

Իվ. Ջավախիշվիլին հայ գյուղացիության և նրա ու Տաթևի վանքի մեջ բորբոքված դարավոր դասակարգային պայքարի հարցերը արծարծել է իր «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար» աշխատության մեջ։ Այս գործում հեղինակը քննադատում է բոլոր նրանց, ովքեր վերջին քսանհինգ-երեսուն տարիներին ջանում էին ապացուցել, թե իբր «հայոց ազգը դասային բաժանում ու սոցիալական անհավասարություն չի ունեցել», «ամբողջ ժողովուրդը միշտ ազատ էր ու բոլորն էլ հավասար իրավունքների տեր»։ Մեր հեղինակը գտնում է, որ առաջին մարդը, որը «խախտեց այս սխալ կարծիքը», Մառն էր։ Մառից հետո արդեն բոլորն էլ գիտեն, որ «դասային բաժանումը միջին դարերի Հայաստանի համար էլ հատուկ երևույթ էր ներկայացնում»[6]։

Հայ ֆեոդալական հասարակարգի պատմության հետազոտության ասպարեզում խոշոր է պրոֆ. Ն. Ադոնցի ծառայությունը։ Նա առաջին հետազոտողն էր, որ իր «Армения в эпоху Юстиниана», «Հին Հայ շինականություն» աշխատություններում ապացուցեց նախարարական-ֆեոդալական ինստիտուտի

---

3 Ս. Բահաթրյան, Հողային և անձնական իրավունքը հին Հայաստանում (տե՛ս «Մուրճ», 1894, № 1, էջ 90—91, № 3, էջ 426—427, 429—430, № 4, էջ 552 և հա.)։

4 И. Джавахов, Государственный строй древней Грузии и Армении, СПб, 1905, էջ 133։

5 Նույն տեղում, էջ 194։

6 Պրոֆ. Իվ. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, X դ. և XIII դ. սկզբներին, Երևան, 1937, էջ 7։

գոյությունն ինչպես հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում։ Ն. Ադոնցը ցույց տվեց, որ Հայաստանում էլ տոկա են եղել ֆեոդալական հողատիրության այն ձևերը, որպիսիք կային Արևմտյան Եվրոպայում[7]։ Քննարկելով Հայաստանի հարկային սիստեմը, մանրախույզն ստուգարանելով մատենագիրների մոտ պահպանված հարկային բոլոր տերմինները, նրանց ծագումը, զարգացման էվոլյուցիան, նա նշել է, որ «մեզ չեն հասել որոշակի տեղեկություններ գյուղացիների հողային պարհակների մասին... Այսոնի է միայն, որ մարզպանության շրջանում հայերը հարկեր են վճարել պարսիկներին, անհավանական չէ, որ այդպիսի հարկեր մուծվել են նաև Արշակունիների գանձարանը»[8]։ Հեղինակի կարծիքով, հայ շինականը հարկատու է դառնում Բագրատունիների օրոք[9]։

Նկատենք, որ Ն. Ադոնցն իր հետագա շրջանի աշխատություններում պարզացրել է սխալ դրույթներ։ Անդրադառնալով միջնադարյան Հայաստանի հողատեր-ֆեոդալների և գյուղացիական բնակչության միջև ստեղծված նոր հարաբերություններին, նա մի շարք առիթներով նշել է, որ այդ երկու դասակարգերի միջև միշտ էլ եղել է համերաշխություն, դարավոր բարեկամություն։

Հին և միջնադարյան Հայաստանի շինականների, գեղջուկների իրավական դրությունի հարցերին անդրադարձել է Հ. Մուսայելյանը իր «Անդրկովկասի հողային պայմանները» աշխատության մեջ։ Հեղինակի կարծիքով Հայաստանում «հասարակ ժողովուրդը» բաժանված էր երկու մասի՝ շինականների և գեղջուկների։ Հեղինակը խիստ ընդգծված տարբերություն է նկատել այդ երկու խավերի միջև։ «Շինականները նրանք էին,—գրել է նա,—որոնք տոհմապետի հետ արյունակցական-ազգակցական կապ ունեին», իսկ «գեղջուկները տոհմի կողմից նվաճված երկրի բնակիչներն էին և ստորադասված էին շինականներին, ավելի շատ՝ տոհմապետին»[10]։ Այնուհետև, հեղինակը նշում է, որ «շինականներն ազատ էին, ունեին իրենց քաղաքական անկախությունը և չէին ենթարկվում նախարարներին։ Գեղջուկները, ընդհակառակը, ենթակա էին նախարարներին»։ Հետազոտելով գյուղերի և շենների, գեղջուկների և շինականների, սրանց և նախարարների միջև ստեղծված հարաբերությունների պատմությունը, նա կարծում է, որ հին Հայաստանում «երեք տեսակի գյուղացիություն գոյություն ուներ»։ Առաջին «տեսակի» մեջ մատնացույց է անում «պետական գյուղացիներին», որոնք «անձնապես դեռևս ազատ էին, բայց հարկատու՝ պետությանը միայն, մասամբ էլ եկեղեցուն»։ Երկրորդ «տեսակին» պատկանում էին «եկեղեցական գյուղացիները». սրանք նստած էին «եկեղեցիների, հոգևորականության կալվածների վրա», ազատ էին պետական հարկերից, տուրքերից, բայց հարկեր, տուրքեր և «տասանորդ» էին վճարում եկեղեցուն միայն։ Երրորդ կատեգորիայի կամ «նախարարական գյուղացիության» մասին, ասում է Մուսայելյանը, տեղեկություններ համարյա չկան[11]։

Հեղինակի մի շարք դրույթները մենք ընդունել չենք կարող։ Նախ մենք ոչ մի փաստ չունենք ապացուցելու, որ և՛ Արշակունիների, և՛ մարզպանության

7 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана СПб, 1908, էջ 479, հմմտ. նույնի՝ «Հին հայ շինականությունը»։

8 Նույն տեղում, էջ 481։

9 Նույն տեղում, էջ 487։

10 Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 14—15։

11 Նույն տեղում, էջ 17։

օրոր բոլոր շինականները իրավական, անձնական ազատ էին և օգտվում էին քաղաքացիական իրավունքներից ու արտոնություններից, ենթակա չէին նախարարներին։ Արտադրության ֆեոդալական եղանակի գերիշխանության պայմաններում անմիջական նյութական բարիքներ արտադրողների բացարձակ ազատության մասին խոսելը, մեկմ արտահայտված, թյուրիմացության արդյունք է, իսկ ապացուցելը՝ անհնարին։ Ճիշտ է, որ հայ հին շինականության մեծամասնությունը այդ շրջանում ընկղմված էր գյուղական համայնքներում, ուներ ազատ ելքի իրավունք, ամրացված չէր հողին և ճորտացված չէր. բայց շինականների մի մասը արդեն դրված էր հողատեր-ֆեոդալներից տնտեսական կախման մեջ։ Իսկ համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս եկած, արտադրամիջոցներն ու հողակտորները կորցրած շինականները դեռ սենձական կախման մեջ էին։

Հայ շինականության իրավական դրության մի շարք հարցեր այս կամ այն առումով շոշափել է նաև Լևոն։ Դեռ 1905 թ. նա «Մուրճ» ամսագրում հանդես եկավ «Անցյալի հարցերից» ուշագրավ հոդվածով։ Այս հոդվածում Լևոն գրական պատասխան է տալիս «Արդյո՞ք Հայաստանում գոյություն ունեցել է Ճորտատիրություն» հարցին։ Վկայակոչելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Յաղագս դատաստանեաց շինականաց» հանրահայտ կանոնը և վիմական տարեգրությունից մի երկու փաստ, նա ջանաց ապացուցել, որ «հայ շինականը գտնվել է հողատիրոջ լիիրավ իրավունքի տակ», որ նա իրավունք չի ունեցել «թողնել տիրոջ հողը առանց նրա նախնական համաձայնության... տերը իրավունք է ունեցել որոնել և հետ բերել իրեն լքող գյուղացիներին», որ «տերերի քաղաքական իշխանությունը տարածված է եղել ոչ միայն գյուղացու, այլև նրա ընտանիքի անդամների անձերի վրա»։ «Ահա,—ասում է նա,—իսկական ճորտություն. ճորտեր էին ոչ միայն գյուղացիները, այլև նրանց որդիները»։ Այսպիսով, շարունակում է Լևոն, «Հայաստանի հողն էլ, ուրեմն, ազատ չի եղել սարուկ-անասունի պես վաճառվող հողագործի հեծեծանքներից, արյուն-քրտինքից։ Ոչուր էին կարծում, որ մեր պապերը ոչ ճորտ են եղել և ոչ էլ ճորտատերեր»[12]։ Անդրադառնալով այդ նույն հարցին, Լևոն իր «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ գրել է. «Զափազանց կարևոր է որոշել գյուղական ազգաբնակչության դրությունը—ճորտ էր նա, թե ոչ...։ Հայոց հին գրականության մեջ շատ քողարկված և մթացրած է եղել ճորտության դրությունը և այդ առիթ է տվել գիտնական իրավաբան Վահան վարդապետ Բասամյանին հայտարարելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել ճորտություն։ Առաջին անգամ մենք էինք, որ հերքեցինք այդ հայտարարությունը Գիրակի արձանագրություններից մի քանիսի միջոցով ապացուցելով, որ Հայաստանում եղել է ճորտություն»[13]։

Հայ շինականության ոչ միայն իրավական, այլև սոցիալ-տնտեսական դրության հարցերը ավելի հանգամանորեն, գիտական մեծ բարեխղճությամբ քննարկել է պրոֆ. Ե. Սամվելյանը իր «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը», «Ստրուկները հին Հայաստանում», «Հին հայ իրավունքի պատմություն» աշխատություններում։ Նա կարծում է, որ «հայկական վաղ ֆեոդալիզմի էպոխայում... կալվածատերը, միանգամայն իսկույթ իր կապերը գյուղական համայն-

12 Լ ե ո ն, Անցյալի հարցերից, տե՛ս «Մուրճ», 1905, № 1, էջ 91—99։
13 Լ ե ո ն, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 139, 140, 141։

յից, կարող էր, սկզբնական շրջանում, իր տնտեսությունը առաջ տանել միայն անմիջականորեն իր ձեռքի տակ ունեցած ստրուկների աշխատանքով»: Երկրորդ, կամ «նախարարական ֆեոդալիզմի» շրջանում «ստրուկները հետզհետե կորցնում են իրենց նախնական տնտեսական նշանակությունը իրրև «արտադրական գործիքի», քանի որ ճորտ գյուղացին ավելի շահավետ էր կալվածատեր-ֆեոդալի համար»: Սամվելյանը մի շարք առիթներով նշել է, որ և՛ հին, և՛ միջնադարյան Հայաստանում միշտ էլ «շահագործվող սոցիալական մասսան կազմում էին հողին ամրացված գյուղացիները—հորտերը, որ հայ պատմական իրականության մեջ հայտնի էին շինական անունով և ապա՝ ստրուկներ», կամ «մեր պատմական մատենագրության մեջ տիրապետող ֆեոդալ դասակարգին, ազատանիին, միշտ հակադրված է շինականների դասակարգը, որոնք հայ հին իրականության հորտեր էին»[14]:

Հին, մասամբ նաև միջնադարյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության հետազոտության ասպարեզում մեծ է ակադ. Հ. Մանանդյանի ծառայությունը: Նա առաջին հետազոտողն էր, որ շրջանառության մեջ դրեց հայ գյուղացիության մասին մինչև այդ մեզ անհայտ ոչ միայն հայկական, այլև օտար մատենագրական շատ վկայություններ:

Ակադ. Հ. Մանանդյանը, բանավեճի մեջ մտնելով ակադ. Իվ. Ջավախիշվիլու հետ, մի շարք առիթներով նշել է, որ հայ հին շինականների «անազատ լինելը, այսինքն՝ «ազատների» դասին չպատկանելը՝ դեռևս ապացույց չէ նրանց ճորտական վիճակի»: Այնուհետև, զուգահեռ անցկացնելով հայ հին շինականների և ռուսական սմերդների միջև, նա գրել է. «Հին Ռուսաստանում, օրինակ, «սմերդները» (СМЕРДЫ), որոնք նույնպես իրրև առանձին դաս հակադրվել են ազնվական ավելի բարձր դասերին, և եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը, իրավական իրենց դրությամբ եղել են ազատ»: Ակադ. Հ. Մանանդյանը իրավացիորեն նշում է, թե «հիմնական խնդիրը, որը հարկավոր է դեռ լուծել «շինական»-ների վերաբերմամբ այն է, թե արդյոք նրանք եղել են կապված հողի հետ, ինչպես միջնադարյան ճորտերը, և արդյո՞ք նրանց կախումը կալվածատեր ազնվական դասից տնտեսական՝ն է եղել միայն, թե՞ նաև անձնական»[15]: Ապա, վկայակոչելով շինականների «անազատ» կացությունն ապացուցող մատենագրական բազմաթիվ փաստեր, նա Իվ. Ջավախիշվիլու նման հաստատում է, որ «նախարարական Հայաստանում ևս «շինական»-սերը գտնվել են, ընդհանուր առմամբ, ճորտական վիճակում, համարվել են կալվածատեր-ազնվականության հատուկ գույքը», որ նրանք եղել են «հորտացած և կապված հողին»[16]:

Սակայն «Հավանական համարելով ճորտական գյուղացիության գոյությունը հին Հայաստանում», նա գտնում է, որ այստեղ «կարող էին նույնիսկ լինել ճորտական գյուղացիությունից դուրս նաև ազատ գյուղացիության մնացորդներ»[17]: Այնուհետև, խոսելով շինականների իրավունքների, պարտակա-

---

14 Պրոֆ. Ա. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. Ա, Երևան, 1939, էջ 101, 249, 253:

15 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 161—162 (ընդգծումները մերն են—Ս. Հ.):

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, էջ 171:

նությունների, ծառայությունների մասին, նրանց իրավական դրությունը համեմատելով բյուզանդական կոլոնների, գերմանական Hörig կոչված գյուղացիների հետ, ակադ. Հ. Մանանդյանը, որպես ընդհանուր եզրակացություն, գրում է. «Տարբերելու համար այդ երկու կարգի ճորտերին՝ մենք նպատակահարմար ենք համարում կոլոնների և Hörig կամ зависимый կոչված ճորտերին անվանել կիսազատ ճորտեր, իսկ leibeigen կամ крепостной կոչվածներին ստրկական ճորտեր»[18]։ «Ուրեմն,—շարունակում է հեղինակը,—«շինական»-ները համաձայն մեր դիտողությունների եղել են պատմական հնադույն այս շրջանում կիսազատ ճորտեր (= hörig կամ зависимый) «և իրենց իրավական դրությամբ «համապատասխան... բյուզանդական կոլոններին, Սասանյան Պարսկաստանի գյուղացիությանը և գերմանական Hörig կոչված գյուղացիներին»[19]։

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով միջնադարյան Հայաստանում հողատեր ֆեոդալները իրավունք են ունեցել շինականներին «ծախել, նվիրել, կտակել, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ ամբողջ գյուղերով», շինականների մեծագույն մասը գտնվել է ճորտական վիճակում; ամրացված է եղել հողին և առանց կալվածատիրոջ թույլտվության իրավունք չի ունեցել հեռանալ և գաղթել ուրիշ տեղ»[20]։

Գյուղացիության սոցիալ-իրավական դրության, հողին ամրացման և ճորտացման հարցերին անդրադարձել են նաև Հայկական ՍՍՌ ԳԱ ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանը, պրոֆ. պրոֆ. Բ. Առաքելյանը, Ս. Պողոսյանը և ուրիշներ։ Ա. Գ. Հովհաննիսյանի կարծիքով սկսած X—XI դարերից «ֆեոդալ կալվածատերերը գյուղացիների հաշվին ընդարձակում էին իրենց հողային ֆոնդերը... հողամրացման միջոցով լիակատար ճորտության մատնում շինականներին...», կամ «հայ շինականները ի տարբերություն արևմտա-եվրոպական իրականության... շարունակում էին կապված մնալ ֆեոդալների սեփականության պատկանած հողին». և, վերջապես, «երկրի կալվածատիրությունը հանգչում էր արտատնտեսական ճնշմանը ենթարկվող ճորտ գյուղացիների շահագործման վրա»[21]։

Համեմատաբար ավելի զգույշ է արտահայտվել պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը։ Նրա կարծիքով հայ շինականը ոչ թե ճորտ էր, այլ «սկսած IX—X դարերից ճորտացման էր ենթարկվում»[22]։

Հայաստանում զարգացած, իր ձևավորման պրոցեսը ավարտած «ճորտության», «ճորտատիրության» ամենաջերմ պաշտպանը պրոֆ. Ս. Պողոսյանն է։ Նա կարծում է, որ հայ գյուղացիության ճորտացման պրոցեսը, սկսվելով «ֆեոդալիզմի հենց սկզբից», հիմնովին ավարտվում է XII դարի վերջին և XIII

18 Նույն տեղում, էջ 176 (ընդգծումները հեղինակինն են—Ս. Հ.)։

19 Նույն տեղում, էջ 189։

20 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ։ Երևան, 1952, էջ 114։

21 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, 1957, էջ 335, նույնի՝ Արդյոք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալի նախակգրնական կուտակում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 208—209)։

22 Բ. Առաքելյան, Քաղաքները և առևտուրը Հայաստանում X—XIII դարերում, Երևան, 1958, էջ 66—67։

դարի սկզբին[23]։ Ամփոփելով իր մտքերը, պրոֆ. Ս. Պողոսյանը անվերապահորեն գրում է. «XII դարից սկսած ճորտության վերաբերյալ եղած վկայությունները արդեն աներկմիտ կերպով հաստատում են այդ երևույթի (ճորտատիրության—Ս. Հ.) ոչ միայն գոյությունը Հայաստանի սոցիալ-դասակարգային փոխհարաբերության մեջ, այլև տիրապետող դառնալը»[24]։

Ավելի ճիշտ դիրքերի վրա է կանգնած Բ. Հարությունյանը։ Նրա կարծիքով «գյուղացիների իրավունքների որոշ սահմանափակությունը դեռևս ճորտատիրություն չէ»։ Հայ «շինականները, ծայրահեղ դեպքում նրա հիմնական մասը,—գրել է նա—XII դարի վերջին և XIII դարի սկզբներին դեռևս վերջնականապես ճորտացված չէր»[25]։

Այսպիսով, հին և միջնադարյան Հայաստանի գյուղացիության սոցիալ-իրավական դրությունը հետազոտող պատմաբանների մեծ մասը հակված է ենթադրելու, որ հայ շինական գյուղացիությունը եղել է ամրացված հողին, ճորտացված և արգելված է եղել նրա ազատ ելքի իրավունքը։ Ավելին, նրանց մի մասը հակված է պնդելու, որ միջնադարյան Հայաստանում ոչ միայն առկա են եղել ճորտատիրական հարաբերություններ, այլև զարգացած ճորտատիրական իրավունք, որ հայ գյուղացիության ճնշող մեծամասնության ճորտացման պրոցեսը, սկիզբ առնելով «հենց ֆեոդալիզմի սկզբից», իր ավարտը բոլորում է Բագրատունիների և Զաքարյանների օրոք։ Այս պնդումները ճիշտ չեն։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գրությունները և ֆեոդալական այլ երկրների գյուղացիության պատմությանը նվիրված աշխատությունները ապացուցում են, որ նյութական բարիքներ արտադրողների «հոծ մեծամասնությունը ոչ միայն վաղ, այլև զարգացած ֆեոդալիզմի էպոխայում միանգամից չի ամրացվել հողին ու ճորտացվել։ Մարքսը, Էնգելսը, Լենինը մի շարք առիթներով ցույց են տվել, որ ֆեոդալական հասարակարգում գյուղացիության ճորտացման պրոցեսը ընդգրկել է պատմական հսկայական ժամանակաշրջան և տարբեր երկրներում ընդունել է տարբեր ձևեր ու մեթոդներ։ Մի դեպքում այն հանդես է եկել որպես «կոռային աշխատանքի հետ կապված» իսկական, ստրկական ճորտություն, մյուս դեպքում որպես «սոսկական տուրքապարտություն»[26]. Վ. Ի. Լենինը, խոսելով «արտատնտեսական հարկադրանքի» մասին, գրել է, որ նրա «ձևերն ու աստիճանները կարող են շատ ու շատ տարբեր լինել. ճորտային կացությունից սկսած և գյուղացու դասային անիրավահավասարությամբ վերջացրած»[27]։ Էնգելսը իր «К истории древних германцев», «Գյուղացիական պատերազմը Գերմանիայում» աշխատություններում բազմիցս հի-

23 Ս. Պ ո ղ ո ս յ ա ն, Գյուղացիության ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956, էջ 113—114։

24 Նույն տեղում, էջ 296։ Այս տեսակետը որոշ վերապահությամբ ընդունել է նաև Լ. Բաբայանը։ Չնայած նա գտնում է, որ գյուղացիության ճորտացման պրոցեսը Հայաստանում չավարտվեց, բայց հակված է ենթադրելու, որ Բագրատունիների օրոք այդ պրոցեսն արդեն սկսել էր գրել «մասսայական բնույթ», իսկ Զաքարյանների օրոք կատարվեց, ինչպես արտահայտվել է Էնգելսը, «երկրորդ ճորտություն» (տե՛ս Л. Б а б а я н, К вопросу о закрепощении крестьян в Армении домонгольского периода, 1961, էջ 6, 9, 13, 19)։

25 Б. М. А р у т ю н я н, Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по Судебнику Мхитара Гоша (տե՛ս «Вопросы истории», 1952, № 8, էջ 57—58։

26 Կ. Մ ա ր ք ս, Կապիտալ, հատ. 3, Երևան, 1949, էջ 328 (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

27 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 3, էջ 225։

շատակել է, որ գյուղացիության ճորտացման պրոցեսը ընթացել է ազատ կացությունից դեպի կախյալ և կախյալից դեպի ճորտություն։ Խոսելով միջնադարյան Եվրոպայի գյուղացիության անցած պատմական ուղու մասին, նա ցույց է տվել, որ XIV—XV դարերում սկսվում է նոր ճնշում գյուղացիության վրա, ուժեղանում է «ազատ գյուղացիներին կախյալ, կախյալներին ճորտ և մարկի հատատեղերին հողերը տերունական դարձնելու ձգտում»[28]։

Գերմանիայում, մի այլ կապակցությամբ գրել է Էնգելսը, «բարեկեցիկ միջակ գյուղացիներից շատերը, իհարկե, բայբայվեցին, կախյալ գյուղացիներից շատերը հարկադրված եղան ճորտ դառնալ, համայնական հողամասերից ահագին տարածություններ գրավվեցին»։ Ամփոփելով իր բազմաթիվ ասույթները միջնադարյան Եվրոպայի գյուղացիության մեջ հանդես եկած տարբեր խավերի ու դասերի մասին, Էնգելսը գրում է. «Միջին դարերում ազատ գյուղացիների պայքարը ընդդեմ ֆեոդալական իշխանության միախառնվում էր այն պայքարի հետ, որ ճորտերն ու կախյալ գյուղացիները վարում էին ֆեոդալիզմը հիմնովին տապալելու նպատակով»[29]։

Ռուսաստանում նույնպես առկա էին գյուղացիների տարբեր խավեր, դասեր։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ նույնիսկ «ամենահամայնական» գյուղերում գյուղացիները «ըստ իրավունքների» և «ըստ տիրության» ստորաբաժանված էին «հողազուրկ», «հողաբաժին ունեցող», «նախկին դարբասային», «հողաբաժինները հատուկ մուծումներով գնած», «համայնքների մեջ նոր ընդունված», «հողաբաժինները հանձնած», «հողերը ապառիկների դիմաց գրավ դրած», «հողակտորները կորցրած», «ուրիշների հողերը վարձած», «հավիտենական հող ունեցած», «տուն», որևէ անասուն չունեցող, հողազուրկ, ձիազուրկ, բազմանձի» գյուղացիների[30]։

Տարբեր էին «ճորտ», «կախյալ» և «ազատ» գյուղացիների շահագործման ձևերն ու մեթոդները։ «Եթե նա (գյուղացին—Ս. Հ.) —գրում է Էնգելսը,—ճորտ էր (Leibeigener), լիովին գտնվում էր իր տիրոջ իշխանության տակ։ Եթե դա սոսկ կախյալ գյուղացի էր (Horiger), ապա նրան ճնշելու համար արդեն բավական էին օրենքով և պայմանագրերով սահմանված պարտավորությունները, որոնք օրըստօրև ավելանում էին»[31]։ Ակնհայտ է, որ մարքսիզմ-լենինիզմի կլասիկները խիստ ընդգծված տարբերություն են դրել «ճորտ», «կախյալ», «ազատ», «տուրքատարտ» գյուղացիության կատեգորիաների միջև։ Նրանց կարծիքով դարդացած ճորտատիրությունը, ճորտատիրական իրավունքը առկա են եղել կլասիկ ֆեոդալական-ճորտատիրական երկրներում միայն, իսկ գյուղացիության ճորտային դրությունը, կախյալ վիճակը, տուրքատարտությունը՝ ֆեոդալական բոլոր երկրներում։

Գյուղացիության տարբեր կատեգորիաների սոցիալ-տնտեսական և իրավական վիճակի միջև խիստ տարբերություններ են նկատել ռուսական, արևմտաեվրոպական, վրացական և այլ երկրների պատմության մասնագետները[32]։

---

28 Ֆ. Էնգելս, К истории древних германцев, էջ 123, 124, 127։

29 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 139։

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, էջ 465—466, համա. նաև հատ. 3, էջ 393, հատ. 15, էջ 129, 133, 145—146, հատ. 16, էջ 562—563։

31 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 11։

32 Այդ մասին մանրամասն տե՛ս մեր «Հայ գյուղացիության պատմություն» աշխատությունը, հատ. 1, 1937, էջ 7—49, 210—302։

Այսպես օրինակ, նրանց կարծիքով ռուսական «крепостной», գերմանական «Leibeigener», բյուզանդական «colon», վրացական «մկվիդրի» գյուղացիները համարվել են սերնդից-սերունդ ժառանգական ճորտեր։ Հոգատեր-ֆեոդալներն իրավունք են ունեցել սրանց անջատել հողից, նվիրել, կտակել, վաճառել և՛ հողով, և՛ առանց հողի։ Սակայն սրանց կողքին եղել են բազմաթանակ «ազատ», «կախյալ», «տուրքապարտ» և համայնական գյուղացիներ, որոնք դեռ անձնապես ազատ էին և երկրի էկոնոմիկայում խաղում էին ոչ պակաս առաջնակարգ դեր։ Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան իր գոյությունը պահպանում էր ոչ միայն ճորտացված, հողին ամրացված, այլև մյուս խավերի ու դասերի շահագործման հիման վրա։

Մենք այստեղ հնարավորություն չունենք վերլուծելու ֆեոդալական բոլոր երկրների գյուղացիության պատմությունը, մեջբերումներ կատարելու գյուղացիության անցած պատմական ուղուն նվիրված բազմաթիվ աշխատություններից։ Սակայն որպես տիպիկ օրինակ կվերցնենք ճորտատիրության կլասիկ երկիրը՝ Ռուսաստանը։ Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը ռուսական սմերդ-գյուղացու ճորտացման պրոցեսի սկիզբը համարել է IX դարը։ Սկսած այս շրջանից հոգատեր ֆեոդալները աստիճանաբար սահմանափակում են գյուղացիների ազատ ելքի իրավունքը, կնքում են պայմանագրեր հոգատերերին լքող գյուղացիներին չընդունելու մասին։ Այնուհետև 1497 և 1550 թթ. Դատաստանագրքերով սահմանում են «Յուրի»-ի օրը։ Սակայն այս պայմաններում էլ դեռ ռուս գյուղացիության ճնշող մեծամասնությունը օգտվում էր ազատ ելքի իրավունքից։ Նրանց ազատ ելքի իրավունքը արգելվում է միայն 1649 թ.։ Այս թվականին մշակվում է Ալեքսեյ Միխայլովիչի «Уложение»-ն, որով տերերին իրավունք է վերապահվում ցմահ որոնել և հետ բերել փախած գյուղացիներին։

Այսպիսով, ճորտացման այն պրոցեսը, որը սկսվել էր IX դարից, ավարտվում է միայն XVII դարի 40—50-ական թթ., այսինքն՝ տևում է շուրջ 7 դար։ Միայն XVII դարի 50-ական թթ. է, որ հսկայական չափերի է հասնում հողին ամրացված և ճորտացված գյուղացիության թիվը։ Ահա մի երկու օրինակ. XVII դարի 50-ական թթ. Մոսկովյան իշխանության տերիտորիայում ապրած 4,9 միլիոն բնակչությունից ճորտացված էր 4 միլիոն մարդ։ Նույն դարի 90-ական թթ. 6,5 միլիոն բնակչությունից՝ 5,5 միլիոնը ճորտեր էին. 1756 թ. տվյալներով ճորտերի թիվը կազմում էր կայսրության բնակչության 55,5 տոկոսը։ Այնուհետև, սկսած XIX դարից, աստիճանաբար նվազում է ճորտ գյուղացիների թիվը. եթե 1815 թ. նրանք կազմում էին երկրի բնակչության 46,2 տոկոսը, ապա 1859 թ.՝ 30,7 տոկոսը միայն[33]։

Հայտնի է, որ Ռուսաստանում ոչ միայն «ֆեոդալիզմի հենց սկզբից», այլև զարգացած ֆեոդալիզմի շրջանում «ազջ» գյուղացիությունը ամրացված չէր հողին և ճորտացված չէր։ Ճորտացված և հողին ամրացված գյուղացիության կողքին մեծ տոկոս էին կազմում դեռ անձնապես, իրավապես ազատ գյուղացիները։

Ինչպես էր վիճակը Հայաստանում։

Մեր և՛ ձեռագիր, և՛ տպագիր սկզբնաղբյուրներում, վիմական արձանագրություններում, կանոնգրքերում, դատաստանագրքերում, գեղարվեստական, քաղաքական երկերում հաճախակի, որպես հոմանիշներ գործածված են՝ «ռա-

[33] «Вопросы истории», 1959, № 11, էջ 87։

միկ», «գեղջուկ», «շինական», «գյուղացի», «ամրոխ», «բազմություն» բառերը։ Եղակի չեն գեղջիները, երբ մեր մատենագիրները և՛ կախյալ, և՛ ազատ, և՛ ճորտացված գյուղացիների համար գործ են ածում միևնույն տերմինը։ Այս է հիմնական պատճառը, որ շինականների սոցիալ-տնտեսական և իրավական դրությունը հետազոտողների մի մասը բերելով «մի երկու» վկայություն, ջանացել է ապացուցել, թե շինականները և՛ Արշակունյաց, և՛ մարզպանության շրջանում «ամրացված են եղել հողին, կապված են եղել հողին և իրենց տերերին»։ Որո՞նք են այդ վկայությունները։ Ակադեմիկոսներ Իվ. Ջավախիշվիլին, Հ. Մանանդյանը, պրոֆ. Խ. Սամվելյանը և ուրիշներ վկայակոչել են Դվինի ժողովում մշակված 9-րդ կանոնը և Ագվանից Վաչե Բագավորին պատկանած «1000 երդի» մասին Եղիշեի ու Մ. Կապանկատվացու մոտ պահպանված փաստը։ Քննարկենք այս վկայությունները «առանձին-առանձին։ «Կանոնք Դուինայ ս. ժողովոյն» 9-րդ կանոնում սահմանված է հետևյալ ուշագրավ հատվածը. «...Յորժամ ազատք գիւրեանց գերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն, զժառանգաւորս զկեկեցեալս ջանան ի ծառայութիւն և ի սորրկութիւն արկանել...»[34]։

Եղիշեն և Մ. Կապանկատվացին վկայում են, որ Ագվանից Վաչե Բագավորը պարսկական Պերոզ արքայից «խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդ. առ զայն ի թագաւորէն, և ետաւ ի նմա միայնակեցօր հանդերձ»[35]։ Այս երկու վկայությունների հիման վրա և՛ ակադ. Հ. Մանանդյանը, և՛ նրա օրինակով պրոֆ. Խ. Սամվելյանը և ուրիշներ գտել են, որ «երդերն ու մարդիկ» հին Հայաստանում եղել են «ժառանգական բաժանման առարկա», որ «այդ նույն գույքն, այսինքն՝ երդերն ու մարդիկ հնարավոր է եղել գնել, վաճառել, ընծայել, կտակել», որ տվյալ հողվածում «արձագանք է գտել հնավանդ ֆեոդալական իրավունքը ճորտացված գյուղացու՝ շինականի, անձնավորության վրա, այն ամրացված էր հողին» և, վերջապես, «երդերի և մարդկանց այս բաժանումը վերաբերում է «ազատներին» պատկանող շինականներին»[36]։ Թե ինչո՞ւ, ի՞նչ հանգամանքներ հաշվի առնելով «գերդ» և «զմարդ» բառերի տակ նրանք ենթադրել են շինականներին և այն էլ ճորտացված շինականներին, այդ մեզ համար անհասկանալի է։ «Երդերի», «մարդկան» բաժանման մասին եղած այլ վկայություններ մեզ հնարավորություն են տալիս ապացուցելու, որ այդ կարգի բաժանման ենթակա են եղել ոչ միայն շինականները, այլև հանցապարտ, օրինազանց հոգևորականները, ազատները։

Շահապիվանի ժողովում մշակված 9 կանոնում ասված է, որ եթե ոմանք մեկը. լինի ազատ թե շինական, առանց լուրջ պատճառի «զկինն թողցէ... զատաստանն այս լիցի, զտուն և զկենաս և զորդիս և զհող և զջուր զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց, զկէսն կնոջն ասցեն»[37]։ Այս վկայությունները ցույց են տալիս, որ «երդերի և մարդկանց» բաժանումը «ճորտական վիճակը բնորոշ հատկանիշը» չէր և չէր կարող լինել։ Հին Հայաստանի մեր բոլոր մա-

---

34 «Կանոնգիրք Հայոց», էջ 126։

35 «Ե ղ ի շ է ի Պատմութիւն Վարդանայ», Թիֆլիս, 1913, էջ 258—259, «Մ. Կապանկատվացու Պատմութիւն Եղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 24։

36 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 162—163, Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, էջ 257։

37 «Կանոնգիրք Հայոց», էջ 61 և ուրիշներ։

տենագիրների մոտ, կանոնական որոշումների մեջ պահպանվել են բազմաբանակ վկայություններ շինականների իրավական, անձնական (կրկնում ենք ոչ թե հարկային, տնտեսական) ազատության մասին։ Այն մասին, որ հայ նախարարները, ազատները դեռևս իրավական-քաղաքական իշխանություն չեն ունեցել տնմիջական նյութական բարիքներ արտադրողների «հոգ մեծամասնության» անձի նկատմամբ, որ վերջիններիս կախումը առաջիններից եղել է միայն տնտեսական, պահպանվել են շատ ավելի մեծ թվով ու կարևոր վկայություններ։ Դա, ասենք, Դվինի ժողովի և Վաչե թագավորի 1000 երդերի ու մարդկանց մասին եղած վկայությունները միայն։

Իրենց սոցիալական բովանդակությամբ, եկեղեցական աշխարհաժողովներում մշակված կանոններից ուշադրավ են Շահապիվանի ժողովի (V դար) մշակած կանոնները։ Այդ ժողովը խիստ ու դաժան կանոններ է մշակել հոգևոր դասի ցոփ, պիղծ և այլասերված բարքերի (կանոն Ա, Բ, ԺԴ), աշխարհիկ ֆեոդալների ամբարտավան վարքերի (կանոն Գ), ամուսնալուծության (կանոն Դ, Դ, Ե, Զ), առևանգումների (կանոն Է), կախարդության և հմայության, մահացածների վրա կոծ ու ողբ անելու, մարդատյաց մենակեցության, մերձամուսնության (կանոն Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԹ, Ի) և, վերջապես, մծղնեական ազանդի դեմ (կանոն ԺԹ, Ի)։

Շահապիվանի ժողովի կանոնները հետազոտողների ճնշող մեծամասնությունը հակված է ենթադրելու, որ հանցապարտ ազատները ենթակա են եղել դրամական տուգանքների միայն, իսկ շինականները կամ «հին Հայաստանի ճորտերը» ենթակա են եղել ոչ միայն դրամական տուգանքների, այլև հարկադիր աշխատանքի, ծեծի, մրելու, ճակատներին ազվեսագրոշմ խարանելու։ Այստեղից էլ եզրակացություն, որ իբր հին Հայաստանի շինականները գտնվել են «ճորտային», «անազատ» դրության մեջ և եղել են տերերի ժառանգական «անազատները»։ Այդ դրությունը չի ապացուցվում նույն ժողովի այլ կանոններով։ Հարկադիր աշխատանքի, ծեծի, մրելու, ճակատներին ազվեսագրոշմ խարանելու պատիժներին ենթակա են եղել նաև ազատները, եթե ապացուցված է եղել, որ նրանք մասնակցել կամ թե հարել են «չարագործ» մծղնեական ազանդին։ Նույն ժողովի ԺԹ կանոնում ասված է, որ եթե երեցներից կամ սարկավագներից ոմանք «ի մծղնէութեան գտցի... քահանայութիւնն լուծցի, ազուէսդրոշմ ի ճակատն դիցի...։ Ապա եթէ արք կանամբք և որդւովք գտցին յաղանդին, զարանց և զկանանց և զիրագէտ մանկանց զջիղսն կտրեսցեն, ազուէսդրոշմ ի ճակատն դիցեն և ի գողենոց տարցին։ յապաշխարութիւն»։ Նույն ժողովի Ի կանոնը նույն պատիժներն է սահմանել մծղնեական ազանդին հարած մեծամեծ նախարարների և իշխանների համար[38]։

Անտարակուսելի է, որ այս կանոններից չի կարելի եզրակացնել, թե սարկավագները, երեցները, նախարարները, մեծամեծ իշխանները, նրանց ընտանիքների անդամները «անազատ» էին, իրավազուրկ, որովհետև նրանք էլ ենթակա են եղել մարմնական պատիժների, խոշտանգումների, նրանց ճակատին էլ դրոշմվել է ազվեսանիշ և նրանք էլ ուղարկվել են հարկադիր ու տաժանելի աշխատանքների։ Ոչ միայն V դ., այլև ուշ միջնադարում այս պատիժներին ենթակա են եղել «հանցապարտ» աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, կանայք։

38 Նույն տեղում, էջ 80, 82։

Այս դասին պատկանած այն անձինք, սահմանել է Դավիթ Ալավկա որդին, որոնք «ի դիւական տանն... մտանեն...» կամ «սատանայական խորհուրդ կատարեն», ղրկվելու են «յետին թոշակէն», ճակատներին դրվելու է «ադուէնդրոշմ», կտրվելու է նրանց «ղջիլ ոտիցն» և ուղարկվելու են ուրկանոց-դոգենեցներում «ի վախճան զամենայն կենեաց իւրեանց» աշխատելու[39]։

Հետևաբար, հարկադիր աշխատանքը, մարմնական խոշտանգումները «անպատության», «ճորտության» բնորոշ հատկանիշներ չեն եղել։

Վաղ ֆեոդալիզմի շրջանում հայ նախարարները դեռ իրավունք չունեին շինականներին անջատել հողից, նվիրել, կտակել, վաճառել հողով և առանց հողի։ Շինականների մասին սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունների հետազոտությունը, ընդհակառակը, ցույց է տալիս, որ նրանք օգտվում էին քաղաքացիական որոշ իրավունքներից, նրանց իրավունք էր վերապահված ընտրել և ընտրվել դեղջավագներ, հանդես գալ դատարաններում կամ որպես վկա կամ որպես հայցվոր, մասնակցել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կողմից հրավիրված աշխարհաժողովներին, ընդունել հոգևոր կոչումներ։ Շինականներն իրավունք են ունեցել ընդարձակելու իրենց հողակտորները, գնումների և այլ ճանապարհներով ձեռք բերել նոր հողեր, այգիներ, անդաստաններ, կտակել, ժառանգել, նվիրել, օտարել իրենց շարժական և անշարժ կայքը, հողակտորները։ Ավելին, իրավապես, անձնապես դեռևս ազատ շինականները հանցանք գործելու դեպքում անձամբ ենթակա են եղել դատական պատասխանատվության։ Հանցանքը քավելուց, դրամական տուգանք վճարելուց հետո նրանց իրավունք է վերապահվել «ընդ ընկերս խառնեսցին»[40]։ Անկասկած է, որ այստեղ մեր խոսքը հայ հին շինականության բացարձակ ազատության, անկախության մասին չէ։ Հայտնի է, որ ֆեոդալական հասարակարգում անմիջական նյութական բարիքներ արտադրողները միշտ էլ դրված են եղել հասարակության ամենաստորադաս աստիճանում և կազմել են հարկատու և շահագործվող գասակարգը։ Պատմական սկզբնաղբյուրների հեղինակները միշտ էլ հայ գյուղացիներին, շինականներին հակադրել են իշխող և արտոնյալ դասերին՝ նախարարներին, ազատներին, սեպուհներին, ոստանիկներին, հոգևորականներին և մատնացույց արել առաջինների «անազատ» և վերջինների՝ «ազատ» կացությունը։ Ավելին, նույնիսկ վաղ ֆեոդալիզմի շրջանում գյուղական համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս են գալիս և հողատեր-ֆեոդալներից անձնական կախման վիճակում են դրվում հողակտորները, աշխատամիջոցները կորցրած, ինչպես պատկերավոր արտահայտել են մեր մատենագիրները, «վար և այգի» չունեցող, «կարճազատ», «առապեալ», «բոկոտն» գյուղացիները։ Սակայն այս շրջանում հայ շինականության ճնշող մեծամասնությունը դեռ շարունակում էր մնալ գյուղական համայնքների ազատ անդամ և նրա ու հողատեր ֆեոդալների, ավելի ճիշտ ֆեո-

---

39 Պրոֆ. դոկտ. Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկա որդու կանոնները. ուսումնասիրություն և բնագիր, Երևան, 1953, էջ 26—27։

40 Շինականների իրավունքների և պարտավորությունների մասին տես Ագաթանգեղոս, էջ 73, 76, Բուզանդ, էջ 61, 126—127, Եղիշե, էջ 31, 67, 118, 170—171, Ղ. Փարպեցի, էջ 67, 187—188, «Կանոնգիրք Հայոց», էջ 24—25, 64—65, 125, 250։ Ձեռ. N 7615, էջ 170բ, ձեռ. N 6109, էջ 81բ, ձեռ. N 659, էջ 220ա, ձեռ. N 778, էջ 232բ ձեռ. N 654, էջ 182ա, ձեռ. N 3706, էջ 37 և ուրիշներ։

գալական պետության հարաբերությունները որոշվում էին սոսկ «տուրքապարտությամբ»։

Հայ շինականության սոցիալ-տնտեսական կյանքում որոշակի փոփոխություններ և տեղաշարժեր տեղի են ունենում զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում։ Սկսած X դարից և հատկապես XII—XIII դարերում ավելի ու ավելի մեծ չափերով զարգանում և խորանում են ֆեոդալական հարաբերությունները, ձևավորվում է ֆեոդալական կալվածատիրությունը, խորանում և ընդարձակվում են աշխատանքի հասարակական բաժանումը, ապրանքափոխանակությունը, դրամական շրջանառությունը, վաշխառուական գործարքները, շուկայական կապերն ու հարաբերությունները։ Տնտեսական այս հիմքի վրա զարգանում, աճում և բարգավաճում են հին քաղաքները, հիմնադրվում են նոր քաղաքներ, ավելի ու ավելի մեծ չափերով խորանում և սրվում են դասակարգային հակամարտությունները, սոցիալական շարժումները, զինված ապստամբությունները։ Այս պայմաններում գյուղական համայնքները ապրում են ծանր օրեր։ Նրանց շարքերից դուրս են գալիս և հողատեր-ֆեոդալների քաղաքական իշխանությանն են ենթարկվում բազմաթանակ ծառա-տղախիններ, վարձականներ, «նուագուներ»։ Միջնադարյան ձեռագիր սկզբնաղբյուրներում, մատենադրական երկերում, դատաստանագրքերում կան շատ փաստեր, կանոններ հայ գյուղացիության դժնդակ դոյավիճակի մասին։

Ահա մի շարք վկայություններ։ Հայ հողատեր-ֆեոդալները, հատկապես XII—XIII դարերում, իրավունք են ստանում վանքերին և եկեղեցիներին նվիրել հողեր, գյուղեր և նույնիսկ առանձին շինականներ։ Այսպես օրինակ, 1183, 1222, 1226 թթ. արձանագրություններով Հաղբատի վանքը ստանում է հողեր, շինականներ։ Կյուրիկե արքայի Մարիամ և Թուսուդան դուստրերը նույն վանքին «վախմ» են անում «36 տուն ճորտ շինական»։ Հողատեր-ֆեոդալներին իրավունք է վերապահվել «հանել արտաքս» շինականներին և նրանց բնակավայրերը նվիրել վանքերին[41]։

Միջնադարյան Հայաստանում շինականների մի մասի արդեն «ճորտային դրության» մեջ գտնվելն են ցույց տալիս նաև այլ վկայություններ[42]։ Ավելին, սկզբնաղբյուրներում պահպանվել են մի շարք վկայություններ ճորտացված գյուղացու հիմնական պարտավորությունների՝ կոռի և բահրայի մասին։ Միջնադարյան սկզբնաղբյուրներում արդեն գործածական են դառնում կոռի և ֆեոդալական պարհակների հետևյալ տեսակները՝ «կոռ», «մարդոյ կոռ», «եզին կոռ», «կամին կոռ», «սայլին կոռ», «վեցկէ կոռ», «ամենայն ցեղ կոռ», «կոռա-

---

41 Տե՛ս և հմմտ. ձեռ. N 3931, էջ 46ա, ձեռ. N 8150, էջ 26բ, «Վիմական տարեգիրք», էջ 37, 46, 65, 68, 70, 90—99, 102, «Հնախոսական տեղեկագրության Հաղպատայ աշխարհահռչակ վանից սրբոյ Նշանի», գրած Թոմասոմ Բեկ-Երզնկեաց Հաղբատացւոյ, Վաղարշապատ, 1886, էջ 65 և ուրիշներ։

42 Տե՛ս և հմմտ. «Վիմական տարեգիրք», էջ 4, 10, 11—27, 43, 80, 83, 93, 102, 104, 110, 144, Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 92—94, Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 215—216, 320, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 139, 133, 161—162, 249, 291, 357—358, Ստ. Օրբելյան, էջ 178, 215, ձեռ. N 1056, էջ 71, Ստ. Տարոնեցի, էջ 108, Մ. Ուռհայեցի, էջ 308, 309, «Գրիգորի կաթողիկոսի ոգայի կոչեցելոյ նամականի», 1865, էջ 88, 230, «Մեկնութիւն սրբոյ աւետարանի, որ ըստ Մատթէոսի», 1825, էջ 156—157 և ուրիշներ։

ար արտ», «կոռաւար հող», «մեծ և փոքր կոռ», «բեկար-բիդար պիկար», «անպիկար» և այլն[43]։

Այնուհետև Դավիթ Ալավկա որդին, Սմբատ Գունդստաբլը և հատկապես Մխիթար Գոշը սահմանել են հատուկ կանոններ շինականների և հողատերերի հարաբերությունների մասին։

Հայտնի է, որ Գոշը իր Դատաստանագրքի երկրորդ մասի Գ կանոնում սահմանել է հետևյալ ուշագրավ օրենքը՝ «Ագատ յԱրարչէն եղեւ մարդկային բնութիւն, այլ ծառայել տերանց յապագս պիտոյից եղեւ հողոյ և ջրոյ։ Եւ դայս պատշաճ կարծեմ դատաստան—զի թողեալ զտէրունիսն ագատ է, ուր և կամեսցի կալ։ Ասպա թէ այսմ ոչ նելլ որ ի տերանցն եւ բռնադատէ զդնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ագատ են որդիք ծնեալք այլուր և ոչ անդ»[44]։

Այս կանոնը վկայակոչող բոլոր պատմագրանները (բացառությամբ Բ. Հարությունյանի) գտնում են, որ հայ շինականները, կամ «միջնադարյան ճորտերը», կապված են եղել իրենց տերերի կալվածքներին, որ տերերն իրավունք են ունեցել որոնել և հետ բերել ոչ միայն իրենց լքող շինականներին, այլև նրա ընտանիքի անդամներին, որ միջնադարյան Հայաստանում «ագատ դյուղացիության շերտը... լիկվիդացման շեմքին էր կանգնել»։

Նախ, մեզ հայտնի չէ, թե Գոշի այդ կանոնին ենթակա էին բոլո՞ր, թե՞ տերերից հող, ջուր «փոխ» ստացած կամ վարձակալած շինականները միայն։ Մեր ձեռքի տակ եղած մի շարք ուղղակի և, մեծ մասամբ, անուղղակի վկայություններից դատելով, կարելի է վստահ կերպով պնդել, որ Գ կանոնին ենթակա են եղել հողատեր-ֆեոդալներից հող, արտադրամիջոցներ «փոխ» ստացած շինականները միայն։ Գոշի Դատաստանագրքի մի շարք ձեռագիր օրինակներում սահմանված է, որ եթե որևէ մեկը «ոչ ունիցին հող և ջուր ագատ է, ուր և կամիցի գնացէ և բնակեսցէ»[45]։ Ավելին, Գոշն իրավունք է վերապահել շինականներին թողնել տերերին, փոխադրվել այնտեղ, որտեղ իրենք են ցանկանում. նա միաժամանակ խստիվ պատվիրել է թագավորներին ու իշխաններին չբռնադատել նրանց, չարգելել նրանց ագատ ելքի իրավունքը։ Ահա Գ կանոնը այդ խմբագրությամբ. «Ագատ յարարչէն եղեւ մարդկային բնութիւնս, այլ ծառայել տերանց յապագս պիտոյից եղեւ հողոյ և ջրոյ և որ ոչ ունիցին ջուր և հող ագատ է, ուր և կամեսցի գնացէ, և բնակեսցէ, եւ ոչ է իրաւունք իշխանաց և թագաւորաց բռնադատել զոմ ի կալ մի գեղ կամ մի երկիր»[46]։

Ուշագրավ է, որ մի շարք ձեռագրերում բոլորովին բացակայում է Գ կանոնի վերջին մասը, այսինքն այն մասը, որտեղ տերերին իրավունք է վերապահվում որոնել և հետ բերել ոչ միայն իրենց լքող շինականներին, այլև նրանց ընտանիքի անդամներին։ Ավելին, հնդինակը պահանջում է, ոչ միայն ապառատան տակ տերերին լքող շինականներին, այլև ծառաներին։ Եթե տերը, սահմանել է Գոշը, ծառայի ծառայության ժամկետը լրանալուց հետո «ոչ կամի յետին ամին թողնուլ զնա», նա իրավունք ունի թողնել տիրոջը։ Օրենս-

43 «Վիմական տարեգիրք», էջ 4, 10—11, 27, 43, 80, 83, Ն. Շնորհալի, նույն տեղում, էջ 92—94, Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 215—216, 320, Հովհ. Գրաստատնակերացի, էջ 130, 133, 161—162, Ս. Օրբելյան, էջ 178, 211, ձեռ. N 1051, էջ 71։

44 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 320—321։

45 Տե՛ս և հմմտ. ձեռ. N 2593, էջ 53բ։

46 Նույն տեղում, կանոն ԻԱ, էջ 59բ, հմմտ. ձեռ. N 6398, կանոն Ի3, էջ 61ա։

գիրը խիստ կերպով պատվիրում է. «Մի մատնեսցես գծառայ տեառն իւրում որ յանկուցու ի քեզ ի տեառնէ իւրմէ ընդ քեզ բնակիցէ. և ընդ քեզ գետեղեսցի յամենայն տեղւոջ ուր և հաճոյ իցէ նմա, և մի նեղիցէք զնա»[47]։

Այսպիսով, շինականության ճնշող մեծամասնությունը, դեռ նույնիսկ XII—XIII դարերում, ամրացված չէր հողին, ճորտացված չէր, որանց կախումը հողատեր-ֆեոդալներից ուներ տնտեսական բնույթ և նրանք հարկատու և ռենտապարտ էին, բայց ոչ ճորտեր։ Այդ են ապացուցում այլ վկայություններ ևս. Դատաստանագրքի 2-րդ մասի հենց Ա կանոնում, որոշելով թագավորների, իշխանների, ազատների, զինվորականների, շինականների և հայ ֆեոդալական հասարակության այլ դասերի իրավունքներն ու պարտականությունները, հարկերի, տուրքերի, ֆեոդալական պարհակների, կոռի և հարկադիր աշխատանքների բնույթը, ռազմագերիների բաշխման կարգը և հարակից այլ հարցեր, օրենսդիրը խիստ կերպով պատվիրում է տերերին. «առանց դատաստանի մի տուգանեսցի». չի կարելի նաև առանց դատարանի որոշման տուգանել նույնիսկ այն գյուղացուն, որը «յանցաւոր ի տէրունական գոյի»[48]։ Դատաստանագրքի երկրորդ մասի բազմաթիվ կանոններում կարգավորված է ժառանգականության հարցը։ Եթե, սահմանված է մի շարք կանոններում, որևէ իշխան կամ «ի թագաւորական տանէ» որևէ մեկը հանցանք է գործում թագավորի դեմ, կամ այլ «նուաստք» հանցանք են գործում իշխանների դեմ, ապա արդարադատությունը պահանջում է, որ հանցապարտի մահից հետո նրա որդիներն ու եղբայրները չզրկվեն իրենց իրավունքներից և ժառանգությունից։ Հանցավորների մահից հետո, ասում է Գոշը, «զորդիս և զեղբարս ի ժառանգութիւն նոցա կացուցանել»[49]։ Ավելի ուշագրավ է Ժ կանոնը։ Եթե, ասում է Գոշը, օտարները շինականներին պատկանած գյուղերի (այսինքն՝ համայնքների.—Ս. Հ.) սահմաններում հավաքում են պտուղներ, ապա սեփականատեր շինականները պարտավոր են նրանց որպես հատուցում տալ հավաքած բերքի 1/10 մասը։ Այս կանոնն այնքան կարևոր է շինականների սոցիալ-տնտեսական դրությունը պարզաբանելու համար, որ այն վկայակոչում ենք ամբողջապես։

«Շինականաց իրաւացի է տասանորդել օտարացն ի կթել պտղոցն, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն և ըստ խնդրոյ նոցին կամօք եղիցի։ Այսպէս և փայտ ի շինուած, և խոտ յարօտ և ի հնձել, և հող ի վարել»[50]։ Ավելի բնորոշ է ԺԱ կանոնը։ Այստեղ սահմանված է գանձերի բաշխման կարգը։ Եթե որևէ մեկը անդաստաններում կամ իր կալվածներում գտնում է ոսկի ու արծաթ և պարզվում է, որ այն հին թագավորներին է պատկանելիս եղել, ապա հայտնաբերված գանձը «արքունի լիցի և գտնողին՝ տասանորդիցի...»։ Բայց եթե գանձը հայտնաբերել է ոչ թե իրավատեր ազատ մարդը, այլ «վարձկանը», ապա նա չի ստանում գանձի 1/10 մասը, այլ միայն մի մասը, այն էլ տիրոջ հայեցողությամբ[51]։ Կասկածից վեր է, որ մեր օրենսդիրը խիստ ընդգծված

47 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 391։

48 Նույն տեղում, էջ 317։

49 Նույն տեղում, էջ 320։ Ավելի մանրամասն տե՛ս «Յաղագս դատաստանաց բաժանման ժառանգութեան արանց», «Յաղագս դատաստանաց բաժանման ժառանգութեան որոյ որդիս և դստերս իցէ», «Յաղագս դատաստանաց ժառանգութեան կանանց բաժանման», «Յաղագս դատաստանաց բաժանողական արուեստից ընչից ի ժառանգութիւն» կանոնները (էջ 370—381)։

50 Նույն տեղում, էջ 327։

51 Նույն տեղում, էջ 328։

տարբերություններ է դնում ծառա-ապախինների, վարձկանների, «նուագուն-ների» և շինականների իրավա-սոցիալական դրությունների միջև։

Եթե որևէ մեկը, սահմանել է ԺԴ կանոնում Գոշը, հայտնաբերում է հա-յահատիկներով լի հոր և հայտնաբերողը «յուրոց կամ յօտարաց ի ներքս թողցէ հանել ի նմանէ և մեռանիցի, մահու դատաստան լիցի» (հայտնաբերողը), բայց եթե մահացողը ապատ քաղաքացի չէ, այլ վարձկան է, ապա «ճշգրիտ քննու-թեամբ» պետք է պարզել, թե արդյո՞ք վարձողը նրան չի զգուշացրել վտանգի մասին, ապա միայն դատել։ Ավելի ուշագրավ է ԺԴ կանոնը։ Այստեղ ասված է, որ եթե որևէ մեկը «աւելի քան զօրէնն անգթաբար հրամայիցէ գործել և այնու-հետև մահու հասցէ ի տերանց ընդ հարկիւ անկելոց, պարտապան լիցի (տերը) արեան դատաստանի կերտողունից տերանց»[52]։

Օրենսդիրը իրավունք է վերապահում տերերին դնել, գրավ դնել, նվիրել, կտակել, ծեծել, խոշտանգել և նույնիսկ սպանել իրենց ծառա-ապախիններին, սակայն նրանք երբեք իրավունք չեն ունեցել այդ կերպ վարվելու շինակա-նների հետ։

Ահա մի երկու փաստ։ Ծառա-ապախիններին խոշտանգող, աչքերը կու-սացնող, ատամները ջարդող, խեղանդամ դարձնող տերերին նա հռչակում է «անպարտ», լավագույն դեպքում իրավունք է վերապահում նրանց ազատել ծառայությունից։ Այս կերպ չէր կարող վերաբերվել «տերը» շինականի հետ, որովհետև նա դեռ տեր չուներ։ Եթե, սահմանված է ՃԺԲ կանոնում, որևէ մեկը ծանր և մահաբեր աշխատանքի է ուղարկում իրեն ոչ ենթակա, այսինքն ազատ մարդու, և նա աշխատանքի վայրում մահանում է, ապա ուղարկողն «արենա-պարտ է», բայց եթե ուղարկվածը ծառա է, ապախին կամ վարձկան, ապա տերը «անպարտ է». «Զգուշանալ հրամայէ կանոնքս ոչ վայրապար զոր, որ չիցէ վարձկան և կամ այլ օրինակաւ իւր ի գործ առաքել, զի արյան դատաստան հրամայէ մեռանելոցն լինել»[53]։

Ավելին, Գոշը իրավունք է վերապահում սնանկացած, արտադրամիջոց-ները և հողակտորները կորցրած և հողերը վաճառքի հանած մարդկանց նա դնել հողակտորը։ Եթե հողը պատկաներ հողատիրոջը, եթե նա իշխանություն ունենար շինականի հողի վրա, ապա մենք Դատաստանագրքում չէինք գտնի հետևյալ ուշագրավ օրենքը։ Եթե որևէ մեկը, ասում է Գոշը, «վասն ապրատու-թեան ի կալուածոյ վաճառէ, եկիցին փրկանօք յապդատոհմէ իւրմէ մինչև յեթն ամ ըստ օրինացն»։ Չնայած, շարունակում է օրենսդիրը, մենք հողի նա դնման ժամկետը սահմանում ենք յոթ տարի, «բայց առաւելով որքան կարէ— արժան է...։ Իսկ «եթէ ոչ կարիցէ փրկել յեթն ամն անտի յառաջ, հատատիցի վաճառն»։

Եթե հողը վաճառված է ոչ թե «վասն ապրատութեան», այլ «ըստ պյոյ պատճառի վաճառն իցէ ի նմին ամի հատատիցի»[54]։ Հողակտորների նկատ-մամբ սեփականատիրական իրավունքն ամենից բացորոշ սահմանված է «Յա-դագս դատաստանաց սահմանաց ամենայնի» ԿՁ կանոնում։ Օրենսդիրը գրում է, որ ոչ ոք իրավունք չունի փոփոխել «զսահման... զոր հատատեցին հարք... ի ժառանգութեան... զոր տէր Աստուած տացէ... ի ժառանգութիւն... կամ

52 Նույն տեղում, էջ 330, 331։
53 Նույն տեղում, էջ 420—421։
54 Նույն տեղում, էջ 362—363։

«զոր ի հօրէ ունի զսահման ժառանգութեան ոչ պարտի փոխել զընկերին յափշտակելով, բայց երէ կաՀնիսա զրկեալ իցէ՝ դատ վարիլ։ Այլ ՀՀմարտութեամբ ի հօրէ առեալ ժառանգութիւն, ոչ է իրաւացի զկնի մահու հօրն զդՀմամբ փոխել ընդ ժառանգակցացն»[55]։

Որ միջնադարյան Հայաստանում անձնական ազատ գյուղացիության կատեգորիան դեռ զգալի տոկոս էր կազմում, որ նա դեռևս «լիկվիդացման շեմքին» չէր կանգնած, այդ մասին մենք ունենք այլ վկայություններ ևս։ Ստ. Օրբելյանը բառեր չի գտնում փառաբանելու Սյունյաց աշխարհի գահերեց, գահակալ իշխաններին, հռչակաւոր ֆեոդալներին այն առատ նվերների համար, որ նրանք տալիս են Սյունյաց վանքերին ու եկեղեցիներին։ Հայտնի է, որ սրանք վանքերին ու եկեղեցիներին «վախմ» են անում «հալալ հայրենի», իրենց հայրերից ու պապերից իրենց անցած «հիրատակ» կամ «ընդ գնոյ գնեալ», «ընդ գնոյ ստացեալ» հողեր, այգիներ, կալվածներ, նույնիսկ գյուղեր։ Մատենադիրը, թվարկելով Տաթևի վանքին նվիրված շուրջ 50 գյուղերի անուններ, դրանք վշտով արձանագրել է. «Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, զրնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի նին հայրենի տէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՏամալէկս որ մերձ վանիցն էր ի հանդէպն, կարացին սեպհականել. զի Ճորա նոյնպիսիք էին (այսինքն՝ «հին հայրենի տէրք էին»—Ս. Հ.)։ էր և աւագականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն... որ Առաւելագաշտն կոչեն ի ներքին Ուռեակին. և զայս ևս ոչ հալածեցին. յորոց վառանդ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն»[56]։ Նույն պատմիչի վկայությունը այն մասին, թե Սյունյաց Սոփիա իշխանուհին վճարելով 1000 դահեկան գնում է Տամալեկ գյուղի գյուղացիների հողակտորներ, և հանձնում է «ի ձեռն տեառն Յակոբայ...»[57], ցույց է տալիս, որ այս (և ոչ միայն այս) գյուղերի բնակիչները ժառանգաբար տիրակալում էին իրենց հողակտորներին։

Այնուհետև՝ վկայության շարունակությունից պարզվում է, որ ոչ միայն հողեր, այլև աշխարհիկ ֆեոդալները, գահակալ, գահերեց իշխանները, հայոց Բագրատունը չեն կարողանում գյուղացիներին տեղահան անել և նրանց հողակտորները «սեպհականել», նույնիսկ վարչական բիրա և դաժան միջոցներ գործադրելուց հետո։ Ուրեմն՝ հին հայրենատեր գյուղացիները սերնդից-սերունդ ժառանգաբար ազատ գյուղացիներ էին. նրանք դեռ չունեին իրենց տերերը։ Սրանց և՛ հողակտորների, և՛ անձերի վրա դեռ չէր տարածվել հողատեր-ֆեոդալների իշխանությունը։ Անկասկած է, որ «ընդ գնոյ գնեալ» կամ «ըստ գնոյ ստացեալ» գյուղերի «հին հայրենատեր» գյուղացիները ընդգրկված էին տերիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված գյուղական համայնքներում։ Համայնքներում ընդգրկված առանձին ընտանիքների մասնավոր-սեփականատիրական իրավունքը, հատկապես լեռնային, կենտրոնի հետ տնտեսական թույլ կապերով կապված շրջաններում, աստիճանաբար տարածվում էր նաև տնատեղերի, վարելահողերի վրա, որոնք, ըստ Էնգելսի, հետզհետև «լիակատար սեփականության իրավունքի փոխարկվեցին»[58]։ Համայնքների ներսում

55 Նույն տեղում, էջ 381—382, 403—401։

56 Ստ. Օրբելյան, էջ 230։

57 Նույն տեղում, էջ 270—271։

58 Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը utopիայից դեպի գիտություն, Երևան, 1953, էջ 81—82։

ատիճանաբար զարգացող մասնավոր սեփականություններ, գրել է Էնգելսը «տարավ ազատ գյուղացիների առաջացմանը, որոնց սեփականությունը անջատվեց մարկից և մարկի համար դարձավ անմատչելի»[59]։

Ազատ համայնականների մասին ուշագրավ վկայություններ ունի Մ. Գոշը։ Նա Դատաստանագրքի հենց Ա կանոնով փորձում է կարգավորել թագավորների, մեծամեծ իշխանների, ազատների, զինվորականների և շինականների միջև ստեղծված նոր հարաբերությունները։ Այստեղ սահմանված է, որ ազատների, շինականների կողմից ձեռք բերված ավերակ, անմարդաբնակ վայրերը, հողերը և նրանց վրա նոր կառուցված շենքերն ու այլ հարմարանքները անցնում են հորից որդուն ժառանգաբար և անքակտելի սեփականատիրական իրավունքով։ «Թագաւոր իշխանի առեալ գաւառ,—սահմանել է Գոշը,—եթե շինէ ըստ հրամանի նորա բերդ և կամ աւան և կամ աւերակս ի նոյն սահմանեսն ի ժառանգութիւնս համարեսցի նմա...». «Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին և ընդ ազատաց ձեռամբ շինականք. յորժամ աւերս շինեսցեն և ոգս հատանիցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդւոց նոցա յետ մահու. այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց և իրաւացի լիցի, և մի ի պատճառս զրպարտութեան փոփոխիցին»։ Ավելին, օրենսդիրն իրավունք է վերապահում շինականների կողմից նոր հիմնադրված բնակելի վայրերը որոշ ժամանակ հոչակել «ապահարկ»։ «Նոր շինեալ տեղեաց ազատութիւն լիցի, մինչ զի ամենայնիւ հաստատիցի»[60]։ Այնուհետև Գոշը սահմանում է, որ ազատներին իրավունք չի վերապահված բռնագրավել շինականների հողակտորները, առանց դատական օրգանների որոշման տուգանել նրանց։ Այս կանոններում, անկասկած, խոսքը գյուղական համայնքներում ընդգրկված շինականների մասին է։ Օրենսգրի «յորժամ աւերս շինեսցեն և հոգս հատանիցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդւոց նոցա յետ մահու» օրենքն ապացույց է այն բանի, որ ավերակ, անմարդաբնակ, անտառապատ վայրերը կարող էին մշակելի դարձնել ոչ թե անհատ գյուղացիները, այլ գյուղական կազմակերպված համայնքները միայն։ Այսպիսով, Մ. Գոշը և մեր մյուս մատենագիրները միջնադարյան Հայաստանը ներկայացնում են որպես տիպիկ ֆեոդալական երկիր։ Ֆեոդալական հիերարխիայի գլուխ կանգնած էր կամ թագավորը կամ մեծամեծ իշխանը՝ իշխանաց իշխանը։ Այնուհետև հաջորդաբար գալիս էին իշխանները, ազատները, հողևորականները։ Ֆեոդալական կարգի ամենաստորադաս աստիճանում գտնվում էին շինականները, ծառա-ազատները, վարձկանները։ Հին և միջնադարյան Հայաստանի հարկատու, «ռենտապարտ», «տուրքապարտ» և շահագործվող հիմնական դասակարգը հանդիսանում էր շինականությունը։ Եթե հին Հայաստանում շինականները հարկեր ու տուրքեր էին վճարում կենտրոնական իշխանությանը, օտար տիրակալներին և հայ հողատեր-ֆեոդալներին, ապա միջին դարերում, բացի հարկերից ու տուրքերից, նրանք կատարում էին նաև հարկադիր այլ աշխատանքներ։ Մխիթար Գոշը և մեր մյուս օրենսդիրները որոշել են հարկերի, տուրքերի, ֆեոդալական պարհակների տեսակներն ու չափերը։

Այսպես օրինակ, ջրարբի անդաստաններից գանձվում էր բերքի $^1/_5$, անջրդի անդաստաններից՝ $^1/_{10}$ մասը։ Հարկերից և տուրքերից ազատ էին «արծա-

59 Նույն տեղում։

60 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 317—318։

թագին», այսինքն՝ նոր ձեռք բերված անդամները, այգեստանները, բուրաստանները, ջրաղացները, տները և խանութները։ Գոշը պահանջում է առանձին հարկի չենթարկել եղերին, ձիերին, ջորիներին, որովհետև սրանք բազում անգամ աշխատել են կամ «հնգեկի» կամ ծառայել «զտերունիսն»[61]. Խիստ ուշագրավ է ու հետաքրքրական, որ Դատաստանագրքում այնքան հանգամանորեն շարադրելով շահագործող և շահագործվող դասակարգերի իրավունքներն ու պարտավորությունները, Գոշը միայն մեկ անգամ է խոսում ճորտ գյուղացիների հիմնական պարտավորության՝ կոսի մասին։ «Այսպէս և յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և ակրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է»։ Ակնհայտ է, որ Գոշի շրջանում ֆեոդալական շահագործման հիմնական ձևը ոչ թե աշխատանքային, այլ արգյունքային ռենտան էր։

Մարքսը, հանգամանորեն շարադրելով մինչկապիտալիստական հողային ռենտաների զարգացման տարբեր էտապների պատմությունը, ցույց է տվել, որ աշխատանքային ռենտայի կամ կոսի գերիշխանության շրջանում հանդես են գալիս «անձնական կախման հարաբերություններ, անձնական անազատություն... շղթայված վիճակ, ճորտային հպատակություն (Hörigkeit) իսկական իմաստով»[62]։ Անդրադառնալով արգյունքային ռենտային, Մարքսը գրել է, «Ռենտայի այս ձևի ժամանակ անհրաժեշտ չէ ամենևին, որ արգյունքներով ռենտան, որում ներկայանում է հավելյալ աշխատանքը, կլանի գյուղական ընտանիքի ամբողջ հավելութային աշխատանքը»։ Ռենտայի այս ձևի գերիշխանության ժամանակ, շարունակում է Մարքսը. «...ավելի մեծ տարբերություններ էլ են առաջ գալիս առանձին անմիջական արտադրողների տնտեսական դրության մեջ»։ Այդ փոփոխությունները կայանում են նրանում, որ իրենք՝ անմիջական արտադրողները, նույնիսկ «տիրահպատակ», «ռենտապարտ» գյուղացիության մի մասը, միջոցներ է ձեռք բերում և իր հերթին շահագործում է «ուրիշի աշխատանքն անմիջաբար»[63] կամ «...ֆեոդալիզմի ժամանակաշրջանում ավելի ունևոր տիրահպատակ գյուղացիները իրենք իրենց հերթին ճորտեր էին պահում»[64]։

Արդ, ընդունելով ոչ թե զարգացած, իր ձևավորման պրոցեսն ավարտած հորատական իրավունքի, ճորտատիրության, այլ ճորտատիրական հարաբերությունների, գյուղացիության «ճորտային դրության», «կախյալ վիճակի» առկայությունը միջնադարյան Հայաստանում, ավելորդ չենք համարում կատարել մի շարք ընդհանուր բնույթի եզրակացություններ։

1. Ինչպես վաղ, այնպես էլ զարգացած ֆեոդալական հասարակության անմիջական նյութական բարիքներ արտադրողը, շահագործվող ու հարկատու դասակարգը հանդիսանում էր հայ շինականությունը։

2. Հին Հայաստանում շինականության ճնշող մեծամասնությունը ընդգրկված էր գյուղական համայնքներում. նրա և հողատեր-ֆեոդալների, ավելի ճիշտ, ֆեոդալական պետության, հարաբերությունը որոշվում էր սոսկ տուրքապարտությամբ։ Բայց այս շրջանում էլ շինականների մի աննշան մասը,

---

61 Նույն տեղում, էջ 315—316։

62 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, էջ 329 (այս և հետագա ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

63 Նույն տեղում, էջ 334։

64 Նույն տեղում, էջ 337։

կորցնելով իր արտադրամիջոցները, հողակտորները, արդեն զրված էր նաև անձնական կախյալ վիճակում։

3. Միջնադարյան, զարգացած ֆեոդալական արտադրահարաբերությունների գարաշրջանը թևանցած Հայաստանում հայ շինականների թե՛ տնտեսական և թե՛ իրավական կյանքում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ և տեղաշարժեր։ Շինականները այս շրջանում ստորաբաժանվեցին 4 հիմնական և մի շարք այլ մասնավոր կատեգորիաների.

ա) Պետական կամ արքունական գյուղացիություն։ Այս կատեգորիային պատկանած գյուղացիները նստած էին պետությանը կամ արքունիքին պատկանած հողերի վրա։ Սրանց և պետության հարաբերությունները որոշված էր տուրքապարտությամբ միայն. սրանք դեռ անձնական, իրավական ազատ էին և օգտվում էին ազատ ելքի իրավունքից։

բ) Մասնատիրական գյուղացիություն։ Այս կարգի գյուղացիները նստած էին հողատեր ֆեոդալներին պատկանած հողերի, կալվածների վրա։ Սրանք պարտավոր էին իրենց անձնական աշխատանքով, արտադրամիջոցներով մշակել ֆեոդալների հողը, կատարել կոռ և բահրա։ Մասնատիրական այն գյուղացիները, որոնք հողազուրկ էին, չունեին արտադրամիջոցներ և հողատեր ֆեոդալներից որպես «փոխ» ստանում էին հող, ջուր, սերմացու, քաշող ուժ կամ զրամական միջոցներ այդ ամենը ձեռք բերելու համար, իրավունք չունեին թողնելու իրենց տերերին։ Եթե նրանք կա՛մ անձնական աշխատանքով, կա՛մ թե արդյունքներով չէին մարում «փոխն» և լրում էին իրենց փոխատուին, ապա այս վերջինիս իրավունք էր վերապահված որոնել և հետ բերել փոխառու գյուղացիներին։ Սակայն հողատերերի իշխանությունը դեռևս չէր տարածված հող և ջուր ունեցող գյուղացիների անձի վրա։

գ) Վանական կամ եկեղեցական գյուղացիություն։ Հայտնի է, որ XII—XIII դարերում շատ-շատ չափերի է հասնում վանական և եկեղեցական հողատիրությունը։ Հայոց թագավորները, դահերեց, դահակալ իշխանները, բազմաբանակ ազատները վանքերին և եկեղեցիներին իրենց հոգու «փրկության» համար «վախմ» են անում գյուղեր, հողեր, այգիներ, արոտավայրեր, տներ, ջրաղացներ, զրամական միջոցներ և այլն։ Վանքերն ու եկեղեցիները, կուտակելով նյութական հսկայական միջոցներ, գնում են «գյուղը գյուղի վրա, արտը արտի վրա, դաշտը դաշտի վրա»։ Այնուհետև ֆեոդալական վանքերն ու եկեղեցիները զանազան խարդախ, ծածուկ և ակնհայտ միջոցներով ձգտում են բռնագրավել համայնական գյուղացիների հողակտորները, «արտաքս հանել» վանքերի շրջակայքում ապրող գյուղացիներին և նրանց հողակտորները «տնտեսականել»։ Սակայն ինչպես վանքապատկան, այնպես էլ վանքահպատակ գյուղերի բնակչությունը դեռ ճորտացված չէր. սրանց և հողեր ֆեոդալների հարաբերությունները նույնպես որոշված են հարկատվությամբ միայն։ Գյուղացիությունը հարկադիր կերպով վանքերին ու եկեղեցիներին էր հանձնում «հաս», «պտուղ» և «տասանորդ» կոչված հարկերն ու տուրքերը։

դ) Գյուղական համայնական գյուղացիություն։ Ոչ միայն հին, այլև միջնադարյան Հայաստանում համայնական գյուղացիությունը դեռ շատ մեծ տոկոս էր կազմում և ոչ պակաս դեր էր խաղում երկրի էկոնոմիկայում։

Համայնքներում ընդգրկված «հին հայրենատեր» գյուղացիները նույնպես անձնական, իրավական ազատ էին. նրանք իրավունք ունեին ընդարձակելու իրենց հողակտորները, համայնքի համաձայնության դեպքում վաճառել այն և

այն։ Անկասկած է, որ միջնադարյան Հայաստանում համայնքների ներսում հանդես եկած նյութական և սոցիալական շերտավորումը, նրանց գկատմամբ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ձեռնարկած գրոհները արագացրին համայնքների քայքայումը, համայնքների շարքերից դուրս եկան և հողատեր-ֆեոդալներից անձնական կախման վիճակում գտնվեցին հողակտորներն ու արտադրամիջոցները կորցրած, երբեմնի ազատ համայնականները։

Սակայն այս պայմաններում էլ դեռ շատ ուժեղ, կենսունակ էին գյուղական համայնքները։ Համայնքների և համայնքային հողատիրության առկայությունը Հայաստանում մեծապես արգելակեցին և՛ ճորտատիրության, և՛ ֆեոդալական հարաբերությունների զարգացմանն ու խորացմանը։

Այսպիսով, հայ գյուղացիության այս չորս հիմնական (և մի քանի ավելի փոքր) խավերի առկայությունը մեզ հաստատ կռվաններ է տալիս պնդելու, որ XII—XIII դարերում հայ շինականության մեծամասնությունը դեռևս ամրացված չէր հողին, ճորտացված չէր։ Ճորտատիրական հարաբերությունները լայն տարածում էին գտել Հյուսիսային Հայաստանում, Կիլիկիայում և մասամբ էլ միջնաշխարհում ու Սյունիքում։ Հայաստանի լեռնային, կենտրոնի հետ տնտեսական թույլ կապերով կապված գավառներում և «աշխարհներում» ճորտատիրությունը բացակայում էր. այս շրջաններում դեռ շատ ուժեղ էին գյուղական համայնքները, համայնքային հողատիրությունը և հին հայրենատեր գյուղացիները։

К ВОПРОСУ О ПРИКРЕПЛЕНИИ КРЕСТЬЯН К ЗЕМЛЕ В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Проф. С. Е. АКОПЯН

(Резюме)

Вопрос о существовании в древней и средневековой Армении прикрепления крестьян к земле и об отсутствии у них права «выхода» от землевладельцев неоднократно затрагивался в трудах как дореволюционных, так и советских историков-востоковедов. Часть историков (особенно дореволюционного периода) вообще отрицает не только существование крепостнических отношений в Армении, но и крепостных крестьян (С. Багатрян, А. Гарагашян, В. Бастамянц, Н. Адонц и др.). Другая часть историков (И. Джавахишвили, Я. Манандян, Х. Самуэлян, С. Погосян и др.), наоборот, подтверждает не только существование прикрепления крестьян к земле в средневековой Армении и отсутствие у них права «выхода», но и существование развитого крепостного права.

Критический анализ источников показывает, что не только в V—IX, но даже в X—XIV вв. не все крестьяне и не во всех районах Армении были закрепощены («անպատտ», как это могло показаться на первый взгляд. В IX—XIII вв. в результате внутренних социальных противоречий, с одной стороны, и натиска феодальных сословий, с другой,— сельские общины переживали глубокий процесс разложения. Победа феодальных отношений внесла очень важные изменения в жизнь крестьян-шинаканов и

прежде всего разбила их на две части: на шинаканов-общинников, непосредственно не зависимых от частных землевладельцев, и на шинаканов, зависимых от них. Формы эксплуатации шинаканов определялись условиями их жизни: если они жили непосредственно в феодальных поместьях, то работали на барщине, если же жили вдали от них, то платили налоги. В указанный период в Армении существовали следующие основные категории сельского населения:

а) *Царские или дворцовые крестьяне*, которые были еще юридически свободны, но платили множество разнообразных «дворцовых налогов» (*«արքունական հարկ», «արքունի նեպակ»* и др.).

б) *Частновладельческие крестьяне*, проживавшие на частновладельческих землях и носившие различные феодальные повинности в пользу землевладельцев. Подавляющее большинство частновладельческих крестьян в X—XIII вв. было прикреплено к земле и закрепощено.

в) *Крестьяне, жившие на землях монастырей и духовной знати*. Их основной обязанностью было обрабатывать монастырские земли и платить налоги: «десятину», «հաc» и «птух». Крестьяне этой категории юридически тоже были свободны.

г) *Свободные члены сельской общины* — старые айренатеры (*«Հին Հայրենի աէրք»*). Они юридически тоже были свободны; отношения между ними и феодальным государством и землевладельцами определялись только налогами.

Подавляющая масса крестьян-шинаканов в X—XIII вв. окончательно еще не была закрепощена и имела право свободного «выхода». Если крепостнические отношения были сильно развиты в северной Армении и отчасти в центральных областях страны, то они были очень слабо развиты на окраинах страны, в замкнутых натуральных хозяйствах. Процесс закрепощения крестьян, начавшийся с IX в., в силу ряда исторических обстоятельств не был завершен.